

«ԱՐԵՐԱԾ» Ի ԽԸ. ՏԱՐԵՄՈՒԽԾԸ.

Մեր այժմեան պարբերական հրատարակութիւններից հնագոյնը, հայ եկեղեցականութեան միակ բերանը, Ա. Խջմիածնի Արարատը, այսօր թեակոխում իւր զոյութեան քսանութերորդ տարին: Վթէ Արարատը՝ մի տարեշրջանից միւսն անցնելով՝ միայն սովորական մի պարտք կատարէր, կարիք չէր լինիլ որ և է բացարութեան: Բայց ամենըս ել քաջ զիտենք, որ մեր այս կեանքի շրջանը անցողական լիներով՝ մեր հասարակական բոլոր գործօնները համակերպումնեն ժամանակին, ուստի և յաճախագոյն են նրանց փոխակերպութիւնները:

Անցողական շրջանին յատուկ են խարխափումները, զարմանալի կը լինէր իսկ, եթէ «Արարատ»ը ունեցած չըլինէր իւր խարխափման շրջանները:

Ժամանակի պահանջներին հպատակելով՝ ամսագրիս հոգելոյս հիմնադիր Գեորգ Ռ. Վեհափառ կաթողիկոսը, կամեցաւ մի պաշտօնական բերան (օրգան) ստեղծել հայ եկեղեցու համար: Շնորհիւ մեր գարու լուսաւոր գաղափարների՝ հասարակական կեանքի բոլոր կողմերն ել հետ զշետէ հրապարակային են դառնում ով հրապարակից խոյս է տալիս, նրա վրայ ստուեր է ընկնում: իսկ մեր եկեղեցականութիւն, իւր կեանքի ընթացքում չէ խուսափել հրապարակից, ուստի և առաջին հնարաւորութեան վայրկենին իսկ փութացել է այն ձեռվ հրապարակ իջնել որ ընդունուած է լուսաւոր ազգերի մէջ:

Սակայն փորձն ապացուցել է միշտ որ գործի կատարելութեան համար բաւական չէ ցանկութիւնն, այլ ցանկութեան պիտի համապատասխանէ և կարողութիւնը:

«Արարատ»ի քսանեօթամեայ կեանքն անհերթելի մի տպացոյց է մեր եկեղեցականութեան այն ցանկութեանը, որով նա ձգտել է ժամանակի պահանջներին համապատասխանել իսկ թէ ինչ չափով է կարողացել այդ ցանկութիւնն իրազործել այդ ևս այժմ պատմութեան սեփականութիւնն է: «Արարատ»ի

քառորդ դարուց աւելի անընդհատ կեանքը դեռ սպասումէ իւր քննադատութեան, որը սակայն գործի ծանօթութեան հետ պէտք է և հանգամանքների կշռադատելու կարողութիւնն ունենայ:

Սովորական և անզիր կրկնուող շատ գատողութիւններ երկար տարիներ ակնում են և դատապարտութեան ձեւ են ընդունում, սակայն այդպիսի դատողութիւններից շատ սականները միայն արգարանումնեն ողջամիտ քննադատութեան առաջեւ:

Մինք չենք կամենում այսու պաշտպան հանդիսանալ «Արարատ»ի անցեալին, մեր նըսպատակն է միայն արձանագրել այն փաստը, թէ «Արարատ»ը իւր երկարամեայ զոյութեան ընթացքում տուել է այն, ինչ որ կարող էր տալ այդ շրջանի հայ եկեղեցականութիւնը:

Արդարեւ իսկ «Արարատ»ի կերպարանքն և բովանդակութիւնը այնքան յարափոխու է եղել ոքան բաղմափոխու էր վերջին քառորդ գարումն Ա. Խջմիածնի միաբանութիւնն ու նրա վիճակը:

«Արարատ»ի ընթացքը չափից աւելի ենթակայ է եղել բախտի բերման, ուստի և ցարդ չէ ստացել մի որոշ տիպար, որին իւրաքանչիւր անդամ հետեւ նորակազմ խըմբագրութիւնը:

Ազգիս Վեհափառ Հայրապետի վատահութեանն արժանանալով՝ նոր խմբագրութիւնս, ստանձնումէ այս ծանր գործը ապաւինելով Վեհափառ Հայրիկի օրհնութեան:

Խմբագրութեանս ջանքը պիտի լինի հայ եկեղեցականութեան և Ա. Խջմիածնի միաբանութեան այս իսկ օրգանին մի որոշ կերպարանք տալի որով նա կարող լինէր իւր կոչման ծառայել:

Այսօր այնքան բաղմադիմի են հրապարակագրութեան տեսակները և այնքան շատ նրա ստորաբաժանութիւնները, որ գիտար չէ ընտրութիւն անել մի որոշ ծրագրին: Այն ծրագրիները, որոնցով այժմ առաջնորդում են բարդաւած ազգերի սոյնօրինակ պարբերական հըրքատարակութիւնները, «Արարատ»ի համար

շափաղանց նեղ են: «Արարատ»ը ստիպուած է միանուագ քանի մի պահանջների դոհացումն տալ, ուստի և շատ անդամ՝ թերացել է մի կամ միւս պահանջնի և աւելի յաճախ ամենի վերաբերութեամբ:

«Արարատ»ը կրօնական թերթ է, ուստի նա պետք է հոգայ կրօնական զիտութեանց և կրօնական զգացման բարդաւաճման համար: Կրօնական զիտութիւնների ծանօթութեան հետ նա պիտի ձգաի և հայկական եկեղեցու կրօնական զրականութեան և ուսումնասիրութեան: Ահա մի ընդարձակ ասպարդէղ ոչ միայն «Արարատ»ի նման փոքրածաւալ թերթի, այլ նոյն իսկ մի քանի նման թերթերի համար:

«Արարատ»ը իւր ծրագրի մէջ ունի և ըպրոյագիտութիւն, որին գոնի մասամբ համապատասխանելու համար, պէտք է ամփոփէ բարյագիտական խրատները, որին այնքան կարօտ է մեր ժողովուրդն և նրա առաջնորդ՝ հոգեւորականութիւնը:

«Արարատ»ը նոյնաժամանակ սլատմական եւ զրականական մի թերթ պիտի լինի, որ լոյս սփուէ մեր պատմութեան և զրականութեան մութը և գեռ անձանօթ կետերի վրայ: Ա. Խջմիածնի բերանը յանցաւոր կը լինի, եթէ վանքի հարուստ ձևադրատանից լոյս ընծայէ թագնուած և անյայտ զանձեր: Այդ պարտականութիւնն առաւել ևս ծանրանում է «Արարատ»ի վրայ այն պատճառով որ ցարդ հայկական պատմութեան և զրականութեան ուսումնասիրութիւնը միակողմանի և օտար կրօնական ուղղութեամբ է կատարուած:

«Արարատ»ից սպասուած այս ուղղութեամբ պարզաբանութիւնների կարիքը ոչ նուազ առաջնակարգ է, սակայն ում յայանի չէ, որ այդ կարիքը լցուցանելու համար առսական մի նոյնպիսի «Արարատ» է պէտք:

Վերջին տարիներս «Արարատ»ը իրրե պաշտօնական թերթ պարտաւորեցուցիչ է դարձրած և հայ ուսուցիչների համար, որոնց մէծագոյն մասը զուրկ է: մանկավարժական տեսական կրթութիւնից և որովհետեւ մեր զըրականութեան մէջ մի ժամանակ առատահու

մանկավարժական աղբիւրներն էլ ցամաքած են, ուստի այդ հանգամանքն էլ կողմնակի պարտք է զնում «Արարատ»ի վրայ հոգ տանել իւր պարտաւորեալ ընթերցողների պահանջներին դոհացնել: Այս թէպէտ մի կողմնակի պահանջ է «Արարատ»ի համար, սակայն զարձեալ աշքաթող առնելն անհնարին է:

Հնարաւորութեան վերջին սահմանին ենք համոււմ, երբ ստիպուամենք խստովանիլ որ «Արարատ»ը իրրե բերան ընդհանուր հայ եկեղեցու, պարտական է հաշիւ տալ ցրուած հայ եկեղեցու մէջ կատարուաղ բոլոր նշանաւոր երեսյթների մասին և իրրե ազգային եկեղեցու պաշտպան յարուցանել և արծարծել կենական խնդիրներ ազգային եկեղեցու վերաբերեալ:

Մինչեւ այսօր «Արարատ»ը թերացել է այս նկատմամբ, նա պասահարար միայն ըղբաղուել է Հայաստաննեայց եկեղեցու ընդհանուր և մասնաւոր գործերով այսուհետեւ չէ կարելի նոյն ընթացքը շարունակել: Հայաստաննեայց եկեղեցու ընդարձակագոյն թեմերն անզամ չունին իրենց բերանը, ոչ Կ. Պօլսի պատրիարքութիւնը ոչ ո. Երուսաղէմինը և ոչ էլ որ և է թեմ առհասարակ պաշտօնական հրատարակութիւն ունին: Յատը եկեղեցիների իւրաքանչիւր թեմը իւր պաշտօնական թերթն ունի, իսկ մեր մէջ «Արարատ»ը միակն է, որ հաղիւ կարող է իսկապէս ո. Խջմիածնի միարանութեան բերան լինել:

Բայց միթէ Մայր Աթոռի բերան թերթը կարող է լուել ընդհանուր եկեղեցական խնդիրների վերաբերութեամբ և հայ եկեղեցու հաւատացեալների ճակատագրի մասին:

Այս բոլոր պահանջների դիտակցութիւնն ունենալով՝ խմբագրութիւնս միւս կողմից ըստիպուած կը լինի իւր ոյթերի ակարութիւնը խոսափանիլ եթէ, որ մեր ամբողջ եկեղեցական և ուսուցչական դասը նոյն զիտակցութեամբ չը կամենայ նրան աջակցել:

Ոսոյնելով՝ որ ժամանակը միջոց տայ մեզ, այս ընդարձակ պահանջներին համապատասխան պարբերական հրատարակութիւններով

յառաջ տանելու ազգային եկեղեցու վերա-
ծնութեան գործը. խմբագրութիւնս մի որոշ
ծրագիր է առաջարրել որի սահմաններում
կամենումէ գործել:

Այդ ծրագրի խւաքանչիւր կետի մասին
խօսելու կարիք չկայ, առաջին իսկ հայեաց-
քից ընթերցողը կարող է տեսնել որ խմբա-
գրութեանս ցանկութիւնն է հնարաւոր եղած
շափով իրազործել ամսագրիս լայնածաւալ ծր-
բագիրը:

Բացի սրանից խմբագրութեանս նպատակն է անկերպարան շը թողնել «Արարատ»ը՝ այլ տալ նրան իրեն վայել տեղը։ Եթե կրօնական թերթ է, «Արարատ»ը պէտք է ուրեմն մի որոշ կրօնական բաժին ունենայ, ուր յեղյեղութին վարդապետական, մեխնարանական, կանոնական, ծիսական, և եկեղեցական պատմական խնդիրները։

Եթէ, պատմական, գրականական, բանասիրական թերթ է, ուրեմն նա պէտք է բռնվագահէ պատմական չետաղօտութիւնները, գրականական քննազատութիւններ և արտադրութիւններ և ուսումնասիրութիւններ:

Եթէ «Արարատ»ը բերան է Ս) Խջմիածնի, ուրեմն և Հայ եկեղեցականութեան, նաև պլիախ զեկուցանէ Հայ եկեղեցու կեանքի և գէպքիրի մասին և պաշտպանէ նրա շահերը:

Պաշտօնական վլարատայի մասին կառկած չե կարող լինիլ որ նա պիտի պարունակէ հայ եկեղեցու գործերին վերաբերեալ բոլոր նշանաւոր վճիռներն և կարգադրութիւնները:

Ահա այս որոշ կերպարանքն է, որ պիտի
ունենայ «Արարատը» եթէ խմբագրութիւնն
պատշաճ աջակցութիւն գտնէ բոլոր այն ան-
ձինքներից և հաստատութիւններից, որոնց
ծառայելու իուղած է նա:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

զ ԵՀԱՓՈՒ ԿՈԹՈՒՂԻԿՈՒ ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆԸ

Մայր Ամուից մենակուց յետոյ՝ Սորբին՝
Ս. Օծոթիւն՝ աղջիս Ա Եհավառ Հայրապետը
բարեհանեց մի քանի օր մնալ Երևանում և
ապա գեհտեմբերի 24-ին ճանապար ընկաւ զե-
պի Տիփիւս:

Նորին Արբութեանն ուղեկցեցին մինչև
Տփսիս Գեր. Կիւրեղ սրբազն եպիսկոպոսը,
բարեշն. Բարդուղիմէոս վարդապետը և Յու-
սիկ արքան, չնորհ. Վահան սարկաւազը և
Խորէն էջ. Խրիմեան:

Ուղեկցողների մի ստուար բազմութիւն Ա.
իջմիածնից և Կրեանից, եկեղեցականներ և
աշխարհականներ, բաղդ ունեցան հետեւու
վեհափառ Հայրապետին մինչև Ալլար կալա-
րաներ, որտեղից Սորա սուրբ օրհնութիւնն
առնելով վերագրաբան Կրեան:

Գիշերը Ախտայում անցնելուց յետոյ Նորին Վեհափառութիւնը յաջորդ օրը Ելենովկայում բարեհածեց բնդունել և Խըր Հայրական օրհնութիւնը շնորհել՝ Կոր Բայազիթից իրանց յաջորդի բարեխ Վիւրեղ վարդապետի առաջնորդութեամբ եկած պատգամաւորներին, ուրո՞նք Վեհափառ Հայրապետի համար նախաձաշիկ էին պատրաստել Ելենովկայում:

Աւանալ թի ափին, կղզու հանգեստ, Առ-
րին Օծութեան դիմաւորեց Աւանայ միաբա-
նութեան կողմից վանահար բարեշն. Գրիգոր
վարդապետը, որ և ուղեկցեց Հանդիսաւոր
գնացքին մինչև Ղիլիջան՝ կրելով բարեշն. Մի-
քարէ վարդապետի ընկերակցութեամբ Հայրա-
պետական խան ու գաւագանը:

Կրեկոյեան գէմ Ասրին Ա Եհափառութիւնն արգէն Պիլիջան էր ժամանել, ուր Հայրապետին զիմանորելու համար եկած էին Վրաստանի և Խմերէթի թէմակալ Ռռաշնորդ Արքազան Գէորգ եպիսկոպոսը իւր հետ ունենալով Տիմիսի վիճակային կոնսիստորիայի նախանդամ բարեխն. Համազասպ վարդապետին և արք. Գէորգ և Համազասպ քահանաներին, Աւելքսաննդրապօլի վիճակի յաջորդ բարեխն. Աշոտ վարդապետը մի քանի քահանաներով, Հաղպարծնի վանքի վանահայր բարեխն. Պօղոս վարդապետը և ըրջակայ հայարնակ գիւղերից ժողովրեան ստուար բազմութիւն:

Երկուշաբթի, գեկտեմբերի 26-ին, Արդին
Վեհապատճիւնը ձանապարհ ելնելով Դիլի-
ջանից՝ բարեհածեց Ամիսամաշել Թարսացայ
կայարանում. ձանապարհին բոլոր կայարաննե-
րում և խճուղու վերաց Խրան զնծութեամբ